

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը Նախագծերի կառավարման ինստիտուտի (PMI) հայաստանյան մասնաճյուղի հետ համագործակցության շրջանակներում ս.թ. նոյեմբերի 5-ից ազդարարում է «Նախագծերի կառավարման հիմունքներ» դասընթացի մեկնարկը:

Դասընթացի ընթացքում մասնակիցները լիարժեք տեսական և գործնական գիտելիքներ կստանան նախագծերի կառավարման ամբողջ գործընթացի վերաբերյալ, կձանդթանան նախագծերի կառավարման հիմնական հասկացություններին, կտիրապետեն նախագծերի արդյունավետ կառավարման մեթոդներին և գործիքակազմին, կկարողանան ճիշտ կազմակերպել ընկերության մեջ նախագծերի կառավարման ամբողջ գործընթացը՝ սկսած նախաձեռնումից մինչև փակում և գնահատում, կսովորեն առավել արդյունավետորեն օգտագործել իրենց տրամադրության տակ եղած նյութական և մարդկային ռեսուրսները:

Դասընթացի ընթացքում ներկայացվող տեսական գիտելիքները և գործնական հմտությունները հիմք կստեղծեն՝ բարձրացնելու նախագծերի կառավարման արդյունավետությունը տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպություններում:

Դասընթացը կվարի Նախագծերի կառավարման ոլորտում բազմամյա փորձ ու նախագծերի կառավարման մասնագետի PMP® միջազգային որակավորում ունեցող էքսպերտ, PMI Armenia փոխնախագահ և Հոգաբարձուների խորհրդի անդամ Սոնա Մատինյանը:

### **Դասընթացի արդյունքում մասնակիցները՝**

- Կկարողանան արդյունավետ պլանավորել նախագծի շրջանակը, ժամանակացույցը և ծախսերը:
- Կսովորեն կառուցել նախագծի հիմնական պլանը, կառավարել հնարավոր շեղումները, կատարել անհրաժեշտ շտկումներ:
- Կկարողանան բացահայտել նախագծերի շահագրգիռ կողմերին, աշխատել նրանց հետ և կառավարել վերջիններիս հետ առնչվող ռիսկերը:

- Պատկերացում կկազմեն նախագծերի ռիսկերի մասին, կկարողանան վերլուծել և կառավարել ռիսկերը, հաշվարկել հնարավոր բոլոր զարգացումները:
- Կճանաչեն նախագծերի կառավարման ամբողջ գործիքակազմը, կկարողանան վարել նախագիծը առաջին փուլից մինչև փակում:

### **Դասընթացը նախատեսված է՝**

1. Ինչպես սկսնակ, այնպես էլ փորձառու նախագծերի կառավարման մասնագետների համար, ովքեր ցանկանում են տիրապետել և գործնականում կիրառել նախագծերի կառավարման ժամանակակից ծրագրային միջոցները:
2. Կազմակերպությունների ղեկավարների և նախագծերի պատվիրատուների համար՝ նախագծերի կառավարման մասին ընդհանուր պատկերացում ունենալու նպատակով:
3. Բակալավրիատի բարձր կուրսերի ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների համար:
4. Առաջիկայում PMP որակավորման քննության նախապատրաստական դասընթացներին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց համար:
5. Բոլոր նրանց համար, ովքեր որևէ առնչություն ունեն նախագծերի կառավարման հետ և ցանկանում են առավել ամրապնդել իրենց գիտելիքները:

### **Դասընթացի արժեք՝ 77000 ՀՀ դրամ**

**Տևողություն և ժամեր՝** 24 ժամ, 12 դաս, երեքշաբթի, հինգշաբթի ժ.՝ 18:30 – 20:30 և շաբաթ ժ.11:30-13:30

**Դասընթացի լեզու՝** Դասընթացավարի կողմից նյութի ներկայացումը և բացատրությունները՝ հայերեն, հարակից նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային նյութերը, տերմինաբանությունը և օժանդակ տպագիր նյութերը՝ անգլերեն:

**Ավարտական վկայական՝** Դասընթացի ավարտին քննության 80% շեմը հաղթահարած մասնակիցներին կշնորհվեն ավարտական հավաստագրեր:

ՀՊՏՀ ուսանողները և աշխատակիցները օգտվում են սահմանված վճարի 30 տոկոս, իսկ շրջանավարտները՝ 10 տոկոս զեղչից:

Դասընթացին գրանցվելու համար խնդրում ենք դիմել ՀՊՏՀ շարունակական կրթության և վերապատրաստումների բաժին [aghavni.hakobyan@asue.am](mailto:aghavni.hakobyan@asue.am) էլ-փոստի հասցեով կամ զանգահարել՝ +37410593477 հեռախոսահամարով: